## ՀԵՌԱԳՐԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ՆԱԽԿԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՋԵՈՖՖՐԻ ՖԻՇԵՐԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

### ՆՈՐԻՆ ԳԵՐԱՊԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԴՈԿՏ. ՄԱՅՔԼ ՌԵՄԶԻՆ.

**Լամբեթ-պալատ**

Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի խորանի առաջ աղոթում ենք հանգուցյալ դոկտ. Ջեոֆֆրի Ֆիշեր արքեպիսկոպոսի հոգու հանգստյան համար: Թող Աստված նրա հիշատակը կենդանի պահի երկրի վրա և լուսավորի նրա հոգին իր հավիտենական արքայության մեջ:

Հղում ենք Ձեզ Մեր ցավակցությունները:

Եղբայրական սիրով՝

**Վ Ա Զ Գ Ե Ն Ա**

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

**19-ը սեպտեմբերի 1972 թ.,**
**Ս. Էջմիածին**

• •
•

### ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ.

**Էջմիածին**

Խորին երախտագիտություն Ձերդ Սրբությանը, Ձեր աղոթքների և ցավակցության համար, դոկտ Ջեոֆֆրի Ֆիշեր արքեպիսկոպոսի մահվան առիթով:

Հանգուցյալը հանձնում ենք ամենակարող Աստուծո ողորմությանը և սիրույն:

**Մ Ա Յ Ք Լ Ռ Ե Մ Զ Ի**

ՔԵՆՏՐԲԵՐԻԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

**20-ը սեպտեմբերի 1972 թ.,**
**Լամբեթ-պալատ**